

կու լայ... կինը թաշկինակով շրջազգեստը կսրբէ. կարծեմ տղան մօրը գիրկը միգած է եւ պատճառ տուած է վիճաբանութեան: Ընտանիքներու մէջ պզտիկ տղայներու մէզը մեր երեսփոխաններուն հարցապնդումին կնմանի, միշտ վեճ կյարուցանէ:

Եկուր քիչ մ'ալ աղջիկներու վարժարանն երթանք, որ *Հուսաւորչեան* կկոչուի եւ գոր, Տէր Սուքիաս քահանայն կառուցած է 1868 - ին, ազգէն օգնութիւն մուրալով: Սոյն վարժարանն ժամանակաւ երեք հարիւրի չափ աշակերտ ունէր, իսկ հիմա որ տէր Սուքիասէն առնուած է թաղական խորհրդոյ յանձնուած է՝ հազիւ ութսուն աշակերտ ունի: Կկարծուի որ հայերը չեն ուզեր աղջիկ գաւակ ունենալ, աղջիկներու կանոնաւոր վարժարան մը չունենալնուն համար:

Այս թաղին մէջը կան *Մէզպուրեան*, *Սուրէնեան* եւ *Ագոսնեան* վարժարաններ, որոց առաջին երկուքը երկու սեռէ աշակերտներ կ'ընդունին, իսկ վերջինը միայն իգական սեռէն կ'ընդունի... Շիտակը խօսելով՝ հայրերն եւ մայրերը անհոգութիւն չեն ըներ այս վարժարաններու տղայ հասցնելու համար: Այս մասնաւոր վարժարաններուն ալ յաջողութիւն մաղթենք, քանի որ թաղային վարժարաններէ յուսահատած ենք:

Թաղիս այրերը մեծաւ մասամբ արհեստաւոր եւ պատուաւոր մարդեր են, որ ժամանակաւ ազգային խնդիրներու մէջ մեծ դեր կ'խաղային, իսկ քանի մը տարիներէ ի վեր իրենց թաղային վարժարանին վեճերովը կզրօսնուն:

Ասոնք գրեթէ ընդհանրապէս *սրիրիթիւալիսթ* են, ամենքն ալ օղի կ'խմեն, միայն թէ օղին *տիւզ* տեսակէն կգործածեն: Այս տեղի ժողովուրդն այնպէս համոզուած է, թէ օղին տեսակ մը ջուր է, որ տխրութեան վրայ թափուելուն պէս՝ ուրախութեան կ'փոխէ գայն: *Տիւզը* տարբեր եղանակներով կգործածուի հոն. ոմանք առանց ջուրի կ'խմեն. քիչ մը ջուր դնողներ ալ կան. են որ առաջ քիչ մը ջուրով կ'լուան իրենց բերանը եւ վերջը կ'խմեն օղին. ոմանք գաւաթով կ'խմեն, իսկ ոմանք շիշով, եւ մէկ քանիներ ալ տակառով: Գաւաթով խմողները կծաղորուին ինչպէս *օւտօրաթ* բժիշկներն *ալօրաթ*ներէն:

Թէ՛ այրերը եւ թէ՛ կ'իները շատ կսիրեն բաղնիքը. ձմեռը տաք բաղնիքներէն դուրս չեն ելներ, ամառն ալ ծովու բաղնիքներէն: Ամենքն ալ սագէ մը աւելի յաջողակութեամբ կ'լողան, բայց չափազանց տնտեսագէտ ըլլալնուն պատճառաւ՝ մինչեւ որ ութը ինը ժամ ծովու մէջ չմնան՝ բաղնեպանին վաթսուն բարա վճարելու համար դժուարութիւններ